

Կենսաթոշակառուների/նպաստառուների ՀՀ-ում լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթի առաքման ծառայության պայմաններ

1. Առաքման ծառայությունը հնարավոր է մատուցել Ակբա բանկի միջոցով Սոցիալական ապահովության ծառայության կողմից կենսաթոշակի, պարբերական բնույթ կրող նպաստի և այլ վճարներ ստացող հաճախորդներին:
2. Առաքման ծառայությունը գործում է ՀՀ ողջ տարածքում:
3. Հաճախորդի կողմից ներկայացված՝ Կենսաթոշակառուների/նպաստառուների ՀՀ-ում լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթի առաքման (այսուհետ՝ Առաքում) հայտի հիման վրա Բանկն իրավունք ունի ծառայության միջնորդավճարը գանձել դիմողի՝ բանկում առկա հաշիվներից:
4. Առաքման ծառայության համար դիմելու դեպքում դիմումի հիման վրա սուրհանդակային կազմակերպությանը կփոխանցվի կենսաթոշակառուի/նպաստառուի վերաբերյալ հետևյալ տվյալները.
 - Անուն ազգանուն
 - Ծննդյան ամսաթիվ
 - Հեռախոսահամար
 - Առաքման հասցե
5. Ներկայացված տվյալների հիման վրա սուրհանդակային կազմակերպության աշխատակիցը դիմումում նշված հեռախոսահամար(ներ)ով կապ է հաստատում դիմողի հետ և պայմանավորվածություն ձեռք բերում առաքման համար: Պայմանավորվածության հիման վրա առաքման հասցեով այցելելով՝ աշխատակիցը անձը հաստատող փաստաթղթի հիման վրա նույնականացնում է կենսաթոշակառուին/նպաստառուին և վերջինիս ստորագրմանը ներկայացնում ՀՀ-ում լինելու հանգամանքը հավաստող հայտարարագիրը: Անձը հաստատող փաստաթուղթ չներկայացնելու դեպքում գործընթացը չի իրականացվում, իսկ ծառայության համար վճարված միջնորդավճարը հետ չի վերադարձվում:
6. Առաքումն իրականացվում է 4 աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն ծառայությունից օգտվելիս խնդրում ենք հաշվի առնել այն հանգամանքը, որ բանկը Միասնական սոցիալական ծառայությանը կենսաթոշակառուի/նպաստառուի ՀՀ-ում լինելու վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է տվյալ ամսվա նախավերջին աշխատանքային օրը,

իսկ առաքումն իրականացվում է 4 աշխատանքային օրվա ընթացքում: Ուստի, անհրաժեշտ է ՀՀ-ում լինելու հանգամանքի հավաստման գործընթացն առաքման ծառայության միջոցով իրականացնելու դեպքում դիմումը ներկայացնել նախապես, մինչև տվյալ ամսվա վերջին օրերը:

7. Այն դեպքում, երբ սուրհանդակային կազմակերպության աշխատակիցը կապ է հաստատում դիմողի հետ՝ առաքման համար համաձայնություն ձեռք բերելու նպատակով, սակայն չի հաջողվում պայմանավորվել, ապա պայմանավորվածության ձեռք բերման երկրորդ փորձի ձախողումից հետո նշված հասցեով այցելություն չի իրականացվում: Այս պարագայում ծառայության համար վճարված միջնորդավճարը դիմողին հետ չի վերադարձվելու:

8. Այն դեպքում, երբ սուրհանդակային կազմակերպության աշխատակիցը փորձում է կապ հաստատել դիմողի հետ, սակայն դիմողի կողմից հեռախոսազանգերին չպատասխանելու, հեռախոսահամարի անհասանելի լինելու կամ նմանօրինակ այլ դեպքում չի հաջողվում կապ հաստատել դիմողի հետ, ապա դիմողի կողմից նշված հասցեով այցելություն չի իրականացվում: Այս պարագայում ծառայության համար վճարված միջնորդավճարը դիմողին հետ չի վերադարձվելու: